

**„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ“
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

1.ԸՆԴԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) պրակտիկայի և կարիերայի բաժինը ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է, որի գործունեության իրավական հիմքը ՀՀ օրենսդրությունն է, Ինստիտուտի ռեկտորի կողմից արձակված իրավական ակտերը, Ինստիտուտի և սույն կանոնադրությունները:

1.2 Պրակտիկայի և կարիերայի բաժինը (այսուհետ՝ բաժին) իր առջև դրված խնդիրների լուծման, իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով համագործակցում է Ինստիտուտի այլ կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տարբեր պետական, հասարակական և մարզական կազմակերպությունների հետ:

1.3 Բաժինը իր գործունեությունը ծավալելու նպատակով անհրաժեշտ միջոցներ և ֆինանսավորում ստանում է Ինստիտուտի կողմից, տարբեր դրամաշնորհներից և այլ աղբյուրներից, որոնք արգելված չեն ՀՀ օրենսդրությամբ:

1.4 Սույն կանոնադրությունով սահմանված պահանջները տարածվում են Ինստիտուտի բոլոր մասնագիտությունների գծով սովորողների վրա:

2.ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Բաժնի նպատակներ է՝

- 1) նպաստել սովորողների ընտրած մասնագիտական հմտությունների և գիտելիքների ձեռքբերմանն ու խորացմանը, հաշվի առնելով այն, որ փորձառությունը (պրակտիկական) ուսումնական գործընթացի տեսակ է, որի հիմնական բովանդակությունը ապագա մասնագիտական գործունեության բնույթին համապատասխան ուսումնական, ուսումնահետազոտական, գիտահետազոտական, արտադրական, մանկավարժական առաջադրանքների կատարումն է,
- 2) նպաստել աշխատաշուկայում Ինստիտուտի ուսանողության և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, շրջանավարտների և Ինստիտուտի միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը:

2.2 Բաժնի խնդիրներն են՝

- 1) կազմակերպել և վերահսկել Ինստիտուտի բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորողների տարբեր փորձառության (պրակտիկաների) կազմակերպման և անցկացման ողջ գործընթացը,
- 2) կրթական ծրագրերով նախատեսված և Ինստիտուտի ուսումնական պլանի համաձայն տարբեր տեսակի փորձառության (պրակտիկա)՝ ուսումնական,

ճանաչողական, մանկավարժական, մասնագիտական, կլինիկական, գիտամանկավարժական, գիտահետազոտական, նախապատրաստումը, կազմակերպումը և անցկացումը,

- 3) ինստիտուտի ամբիոնների պրակտիկայի հետ կապված աշխատանքների կոորդինացում, փորձառության (պրակտիկա) ընթացքում անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերի՝ ուսումնական մատյան, ուսանողների ցուցակ, գնահատման տեղեկագիր և այլն, ապահովում,
- 4) դեկանների, ամբիոնի վարիչների հետ համատեղ փորձառության (պրակտիկա) բազաների և մեթոդիստների կազմի որոշում, պրակտիկայի ընթացքում կատարվելիք առաջադրանքների մշակում, գիտամեթոդական խորհրդակցությունների, մեթոդիստների սեմինարների, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների ծրագրերի մշակում,
- 5) փորձառության (պրակտիկա) ընթացքում մեթոդիստների և ուսանողների կատարված աշխատանքների հսկում ու կոորդինացում,
- 6) փորձառության (պրակտիկաների) նախապատրաստական աշխատանքների, ընթացքի և պրակտիկայի արդյունքների մասին հաշվետվությունների ներկայացում Ինստիտուտի գիտական խորհրդում
- 7) ուսանողների և շրջանավարտների կողմից աշխատանք գտնելու հիմնախնդիրների ուղղությամբ ինստիտուտում տարվող աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և ամփոփումը,
- 8) ինստիտուտական կրթական ծրագրերի արդիականության և շարունակական բարելավման ապահովում շրջանավարտների ուսումնասիրման միջոցով:
- 9) ինստիտուտի ուսանողների, շրջանավարտների և պոտենցիալ գործատուների միջև արդյունավետ կապի ապահովում:

3. ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ (ՊՐԱԿՏԻԿԱ)

3.1 Ինստիտուտը կազմակերպում և իրականացնում է փորձառության (պրակտիկա) հետևյալ տեսակները՝

- 1) ուսումնական. անցկացվում է մասնագետներ թողարկող ամբիոնների բոլոր կուրսերում և ներառված է «Մասնագիտություն» ծրագրերում,
- 2) ճանաչողական. ուղղված է ծանոթացնելու մասնագիտական գործունեության բավանդակությանը և կառուցվածքին,
- 3) մանկավարժական. ուղղված է ուսանողների մոտ ամրապնդելու և կատարելագործելու ինստիտուտում տեսական դասերի և գործնական պարապմունքների ընթացքում ստացած գիտելիքները, կարողությունները և հմտությունները, ուսանողներին ուսուցանել ինքնուրույն իրականացնելու դպրոցում ֆիզիկական կուլտուրայի հետ կապված դասարանային և արտադասարանական ուսումնադաստիարակչական ողջ գործընթացը: Մանկավարժական փորձառությունն իր հերթին բաժանվում է՝

ա) ճանաչողական. ծանոթացնել ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների մանկավարժական գործունեության բովանդակությանը և կառուցվածքին:

բ) ուսումնամեթոդական. ձևավորել մասնագիտական-մանկավարժական իրազեկության բազա, ինչպես նաև ուսումնական, դաստիարակչական, մեթոդական, մակավարժական

հետազոտական գործունեություն իրականացնելու պատրաստություն՝ ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

գ) փորձարարական. ձևավորել անձնական մանկավարժական գործընթաց, որպես ն տեսական և գործնական գործունեության միասնականություն՝ մոդելավորելու և իրականացնելու ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական կարողությունները, զարգացնել մանկավարժական առաջնային բանիմացություն:

դ) դաստիարակչական. Ֆիզիկական դաստիարակության գործունեության նկատմամբ հետաքրքրությունների խթանում, մանկավարժական լիակատար բազայի ձևավորում:

- 4) գիտելիքների և գործնական կարողությունների ու հմտությունների տիրապետմանը, ամրապնդմանն ու կատարելագործմանը համապատասխան ընտրած մասնագիտության,
- 5) կլինիկական. ուղղված է ուսումնառության ընթացքում ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքների և գործնական կարողությունների ու հմտությունների կիրառմանը, ամրապնդմանը և կատարելագործմանը տարբեր հիվանդությունների կանխարգելման և բուժման, ինչպես նաև վարական գնման նպատակով: Կլինիկական փորձառության (պրակտիկա) նպատակն է՝ հարստացնել կլինեզիոլոգների և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի մասնագետների մասնագիտական տեսական գիտելիքները, ձեռք բերել պրակտիկ գործունեության կարողություններ՝ տարբեր հիվանդությունների վերաբերյալ:
- 6) գիտամանկավարժական. անցկացվում է Ինստիտուտի մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորողների համար: Ուղղված է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում մասնագիտական, մանկավարժական գործունեության նկատմամբ արդյունավետ պատրաստությանը:
- 7) գիտահետազոտական. անցկացվում է Ինստիտուտի մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորողների համար: Գիտահետազոտական պրակտիկայի նպատակն է մագիստրանտների գիտարոնողական-հետազոտական աշխատանքի հնարքների վարման յուրացումը և նրանց մասնագիտական աշխարհայացքի ձևավորումը:
- 8) մասնագիտական փորձառության նպատակն է ուսանողների մասնագիտական տեսական գիտելիքների և գործնական կարողությունների ու հմտությունների տիրապետումը, ամրապնդումն ու կատարելագործումը՝ համապատասխան ընտրած մասնագիտության:
- 9) մարզական լրագրողների մասնագիտական պրակտիկայի նպատակն է ուսանողներին հաղորդել տպագիր մամուլի, հեռուստալրագրության, առցանց լրագրության հիմնական դրույթները, կազմակերպել և իրականացնել գործնական հանդիպումներ՝ հեղինակելով տպագիր հոդվածներ, հեռուստա-ռադիո հաղորդումներ, տեսանյութեր լրագրության տարբեր ժանրերով, աջակցել երիտասարդ լրագրողների մասնագիտական կարողությունների բարձրացմանը, ինչպես նաև արձագանքել տարածաշրջանի առկա հիմնախնդիրներին և հանրային հնչեղություն տալ: Պրակտիկայի նպատակն է հայրենական մարզական լրագրության ոլորտը ապահովել մասնագիտական որակյալ կրթություն ունեցող լրագրողներով, ինչպես նաև միջազգային լրագրության աշխատաշուկայի և նորարար տեղեկատվական տեխնոլոգիաների պահանջներին համարժեք մասնագետներ:

3.2 Փորձառության հարցերով բաժինը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- 1) փորձառության կազմակերպման մասին հրամանի նախագծի կազմում,
- 2) համապատասխան բազաների հետ փորձառության (պրակտիկաների) կազմակերպման և անցկացման պայմանագրերի կնքում,
- 3) փորձառության մեթոդիստների, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների համար գիտամեթոդական խորհրդակցությունների, սեմինարների, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում,
- 4) դեկաններին և ամբիոնի վարիչներին փորձառության ընթացքի, թերությունների, ուսանողների հաճախումների մասին տեղեկատվության հաղորդում, անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցների ձեռնարկում,
- 5) փորձառության վերահսկման, մեթոդական ու կազմակերպչական օգնության ցուցաբերման, կատարված աշխատանքներին ծանոթանալու նպատակով այցելություն փորձառության բազաներ,
- 6) փորձառության մեթոդիստների հետ շաբաթը առնվազն մեկ անգամ հանդիպման կազմակերպում՝ պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքներին ծանոթանալու և ամփոփելու նպատակով,
- 7) կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա մեթոդիստների հետ համատեղ ուսանողների ամփոփիչ գնահատականների նշանակում,
- 8) մեթոդիստների հետ համատեղ խմբերի լավագույն ուսանող-պրակտիկանտների որոշում և նրանց խրախուսում:

4. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԱՃԻ ԱԶԱԿՑՈՒՄ

4.1 Բաժնի գերակա խնդիրները կարիերայի ասպարեզում հանդիսանում են աշխատանքի տեղավորման հարցերի համակարգումը, նրանց մասնագիտական զարգացման և կարիերայի աճի օժանդակումը:

4.2 Կարիերայի հարցերով բաժինը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- 1) սեմինարների, կլոր սեղանների, կոնֆերանսների, գիտաժողովների, նպատակային և լրացուցիչ պատրաստման և վերապատրաստման դասընթացների, աշխատաշուկայում արդի պահանջների և աշխատանքի որոնման տեխնոլոգիաների ու հմտությունների, մասնագիտական կողմնորոշման և ուրիշ խնդիրների վերաբերյալ խորհրդատվական ու այլ միջոցառումների կազմակերպում, համապատասխան դասընթացներ և այլ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցություն,
- 1) ուսանողների համար զբաղվածությանն առնչվող օգտակար գրականության մշակում և հրապարակում,
- 2) գործատուի հետ համատեղ արտադրական պրակտիկայի ձևաչափերի, պայմանների շուրջ բանակցում,
- 3) զբաղվածության ծառայությունների ու գործակալությունների հետ կապերի հաստատում և զբաղվածությանն առնչվող տեղեկատվության փոխանցման ապահովում ու տարածում,
- 4) փորձառության, կամավոր աշխատանքի, վերապատրաստման և փորձի ձեռքբերման այլ ժամանակակից ձևերի և միջոցների վերաբերյալ առաջարկությունների, ծրագրերի մշակում և համապատասխան աշխատանքների իրականացում,

- 5) պոտենցիալ գործատուների, տարբեր կազմակերպությունների հետ համաձայնագրերի և հուշագրերի կնքում, դրանց իրականացման ապահովում,
- 6) աշխատանք առաջարկող պետական, մասնավոր, միջազգային և այլ կազմակերպությունների կողմից առաջնային համարվող պահանջների և դրանց զարգացման միտումների պարբերաբար ուսումնասիրություն,
- 7) շրջանավարտների և ուսանողների հանդիպումների և կլոր սեղանների, շրջանավարտների մեծարման երեկոների, շրջանավարտների հավաքների կազմակերպում, շրջանավարտների աջակցությամբ և հանգանակած միջոցներով նպատակային ծրագրերի իրականացում:

5. ԲԱԺՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

5.1 Բաժինը վերակազմակերպվում կամ լուծարվում է ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

6. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն կանոնադրությունը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

*Ուժը կորցրած ճանաչել 'Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ' պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդում 31.01.2012թվականին հաստատված 'Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ' պետական ոչ առևտրային կազմակերպության Կարիերայի կենտրոնի կանոնադրությունը, :